«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Փողը և դրա գործառնությունները
ԱՌԱՐԿԱ	Հասարակագիտություն
ՀԵՂԻՆԱԿ	Հմայակ Հակոբյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն. 3

Փողի էությունը և ծագումը. 4

Փողի ֆունկցիաները. 11

Եզրակացություն. 16

Օգտագործված գրականություն. 17

Ներածություն

Աշխատանքի բաժանման խորացումը և բարիքների արտադրության մասնագիտացումը հանգեցնում է փոխանակային հարաբերությունների շրջանակների մեծացման: Փոխանակության խորացման ընթացքում որևէ բարիք աստիճանաբար առանձնացվում է և մյուսների համար դառնում չափման միավոր: Այդ բարիքը համընդհանուր ճանաչում է ստացել և վերածվել չափանմուշի, որի միջոցով որոշվել է մյուս բարիքների արժեքները: Փաստորեն այն դարձել է բարիքների փոխանակությունն իրականացնելու միջոց: Մարդկության զարգացման ընթացքում փոխանակության և միասնական չափման դերը ստանձնում է փողը: Փողն առաջացել է ապրանքային արտադրության, փոխանակային հարաբերությունների և արժեձևերի պարզ կամ պատահական, լրիվ կամ ծավալուն, ընդհանրական և դրամական դրսևորումների զարգացման արդյունքում: Ինչպես արդեն գիտենք, փողը շատ կարևոր դեր ունի մարդկային հասարակության զարգացման գործում: Բոլոր քաղաքակրթություններում ապրանքն իրացվում է փողով, իսկ ստացված գումարով գնվում է մեկ այլ ապրանք, որն անհրաժեշտ է արտադրության կազմակերպման կամ անձնական սպառման համար:

Գիտահետազոտական աշխատանքում մանրամասն նկարագրված են փողի ծագումը, զարգացումը, էությունը, ինչպես նաև գործառնությունները: Այսօրվա հասկացողությամբ փողը համընդհանուր համարժեքի գործառույթ կատարող յուրահատուկ ապրանք է: Տարբեր ազգեր փողի փոխարեն կիրառել են տարբեր ապրանքներ: Այն անցել է զարգացման երկար ճանապարհ: Իր զարգացման ընթացքում փողն ունեցել է դրսևորման մի քանի ձևեր: Սկզբում գոյություն է ունեցել ապրանքների տեսքով, այնուհետև՝ մետաղադրամների, իսկ ավելի ուշ՝ դրանց փոխարինեցին թղթադրամները: Ժամանակի ընթացքում առաջացել են նաև սկզբունքորեն նոր վճարման միջոցներ՝ չեկեր, վարկային կտրոններ, մուրհակներ և այլն:

1. Փողի էությունը և ծագումը

Թվում է, թե յուրաքանչյուր մարդ դեռ մանկուց գիտի, թե ինչ է փողը, ինչի համար է այն պետք և ինչ դեր է կատարում տնտեսության մեջ և կյանքում: Սակայն սպառիչ պատասխան տալ այն հարցին, թե ինչ է փողը, դժվարանում են բոլորը: Մակերեսային մոտեցման ժամանակ փողի էությունը հեշտ է հասկանալ: Փողը այնպիսի 'հատուկ' ապրանք է, որն ունենալով՝ կարելի է գնել ամեն ինչ: Այն մեր առօրյա կյանքի անբաժանելի մասնիկն է: Ժամանակակից շուկայական տնտեսությունն անհնար է պատկերացնել առանց դրամաշրջանառության:

Փողը միևնույն ժամանակ պատմական զարգացման արդյունք է: Այն առաջացել է հասարակության տնտեսական զարգացման որոշակի շրջանում: Փողը առաջացել է աշխատանքի հասարակական բաժանման հետ միասին: Փողը ծագել է այն ժամանակ, երբ մարդիկ ստիպված են եղել փոխանակել իրենց աշխատանքի արդյունքները:

Փողի ծագումը կապված է մ.թ.ա. 7-8-րդ հազարամյակի հետ, երբ հնադարյան ցեղերի մոտ առաջանում էր որևէ մթերքի ավելցուկ, որը կարելի էր փոխանակել այլ մթերքներով, որոնք անհրաժեշտ էին նրանց:

Պատմության ընթացքում մարդը փողն ընդունել է ամենատարբեր և հաճախ էկզոտիկ ձևերով: Փողն առաջացել է ապրանքային արտադրության երևան գալու հետ միասին, երբ մարդկանց աշխատանքով ստեղծված արտադրանքը սպառվում էր ոչ թե անմիջականորեն, այլ ստանում էր ապրանքային ձև, որը նախատեսում էր վաճառքի, փոխանակման միջոցով այնպիսի նոր ապրանքների ձեռքբերում, որոնք կբավարարեն նրա ամենատարբեր պահանջմունքները: Այստեղից հետևում է, որ փողը պատմական կատեգորիա է և որպես փոխանակման միջոց՝ մարդկային պատմության մեջ մտել է սկզբում ապրանքների տեսքով: Պատմականորեն փողի խորհրդանիշ ծառայել են ամենատարբեր ապրանքներ՝ անասուն, շնաձկան ատամ, արծաթ, ոսկի և այլն:

Փողը պատմական կատեգորիա է: Այն առաջացել է ապրանքային արտադրության հետ միասին: Իսկ իր հերթին ապրանքային արտադրության առաջացումը տեղի է ունեցել հասարակության զարգացման վաղ շրջանում, երբ տեղի էր ունենում աշխատանքի առաջին հասարակական բաժանումը՝ հողագործության և անասնապահության տարանջատումը, որի հետևանքով առաջացավ ապրանքների փոխանակման անհրաժեշտություն:

Ապրանքների փոխանակման էվոլյուցիան ընթացել է արժեձևերի զարգացման ճանապարհով: Արժեքը պատմականորեն անցել է զարգացման 4 ձև՝

1. պարզ պատահական կամ եզակի,
2. լրիվ կամ ծավալուն,
3. համընդհանուր,
4. դրամական:

1. Պարզ պատահական կամ եզակի

Այս ձևը փոխանակության մի տեսակ է, որի ժամանակ մի ապրանքը փոխանակվում է մյուսով: Արժեքի այս ձևը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

1ոչխար = 1կացին

Այս արժեձևը կոչվում է **պատահական**, քանի որ 2 ապրանքներ միմյանց պատահականորեն են հանդիպում, իսկ **եզակի**, քանի որ փոխանակման գործարքն ավարտվում է 1 ակտով: Առաջին ձևում գտնվող ապրանքը (տվյալ դեպքում՝ ոչխարը) հանդես է գալիս հարաբերական ձևում, քանի որ իր արժեքն արտահայտում է մեկ այլ ապրանքի մեջ:Հարաբերական ձևում գտվող ապրանքը կատարում է ակտիվ դեր:Իսկ երկրորդ ապրանքը(կացինը) հանդես է գալիս համարժեքային ձևում, քանի որ արտահայտում է այս կամ այն ապրանքի արժեքը: Այս տեսանկյունից այն կատարում է պասիվ դեր: Արժեքի հարաբերական և համարժեքային ձևերը սերտորեն կապված են և իրենցից ներկայացնում են արժեքի միևնույն արտահայտության հակադիր կողմերը: Ընդ որում՝ միևնույն ապրանքը չի կարող միաժամանակ գտնվել և՛ հարաբերական, և՛ համարժեքային ձևերում: Բայց եթե մի ապրանքը մի դեպքում գտնվում է հարաբերական ձևում, ապա մեկ այլ դեպքում կարող է գտնվել համարժեքային ձևում:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այսպիսի գործարքները ավելի են հեշտացնում փոխանակությունը, քանի որ դրանք ավարտվում են միայն մեկ գործարքով: Սակայն սա ավելի շուտ բարդացնում է փոխանակությունը:

Գործարքները առանց արգելքների կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ փոխանակվող ապրանքների տեսականին սահմանափակ է, իսկ երբ առևտրում ներգրավվում է տնտեսավարող սուբյեկտների մեծ շրջանակ, այն կանգնում է լուրջ խոչընդոտների առջև: Այդ դժվարություններից մեկը կայանում է նրանում, որ ապրանքափոխա-նակության համար մեկ ապրանք արտադրողը պետք է գտնի մի այնպիսի արտադրողի, որն ունենար իր ցանկացած ապրանքը և միևնույն ժամանակ երկրորդ ապրանք արտադրողը պետք է ցանկանա գնել առաջինի առաջարկած ապրանքը: Հետևաբար փոխանակությունը կարող է տեղի ունենալ, եթե փոխանակության մեջ մտնող կողմերը ունեն անհրաժեշտ ապրանքներ: Սակայն սա զգալի չափով կրճատում է ապրանքների փոխանակության հնարավորությունները:

Բացի այդ փոխանակության ժամանակ պետք է հաշվի առնվեն կողմերի շահերը և փոխանակվող ապրանքների արժեքների համարժեքայնությունը, ինչը իր հերթին ավելի է սահմանափակում փոխանակման հնարավորությունները: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ առանձին ապրանքներ չի կարելի

2. Լրիվ կամ ծավալուն ձև

Արտադրության հետագա զարգացման հետ միասին տեղի էր ունենում աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացումը, որն ուղեկցվում էր արտադրողականության աճով: Այս ամենը պայմաններ ստեղծեց ապրանքափոխանակության հետագա զարգացման համար: Դրա շնորհիվ ավելի մեծ թվով ապրանքատեսակներ սկսեցին մասնակցել ապրանքափոխանակության գործընթացին: Ապրանքափոխանակությունը սկսեց կրել **լրիվ** կամ **ծավալուն** արժեքային ձև: Արժեքի այս ձևը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

$$1 \text{ ոչխար} = 2 \begin{cases} 1 \text{պարկ ցորեն} \\ 3 \text{ զույգ կոշիկ} \\ \text{մ կտոր} \\ 1 \text{ թուր} \\ 3 \text{ մ կաշի} \end{cases}$$

Արժեքի այս ձևի դեպքում յուրաքանչյուր ապրանք (տվյալ դեպքում՝ ոչխարը), որը գտնվում է հարաբերական ձևում և կատարում է ակտիվ դեր, կարելի է փոխանակել համարժեքային ձևում գտնվող մի քանի ապրանքների հետ, որոնք գտնվում են պասիվ ձևում: Այս դեպքում ապրանքափոխանակությունը սկսում է կրել ոչ թե պատահական, այլ կանոնավոր բնույթ:

Լրիվ կամ ծավալուն ձևի ժամանակ պահպանվում են փոխանակության սահմանափակումները, սակայն որոշ առաջընթաց, այնուամենայնիվ, գոյություն ունի: Այս դեպքում փոխանակվող ապրանքների քանակը բավականին մեծ է, հետևաբար առաջանում է շուկայական ևս մեկ կարևոր կատեգորիայի՝ ընտրության հնարավորություն: Տվյալ դեպքում ոչխարի տերը հնարավորություն ունի իր ապրանքը փոխանակել բազմաթիվ ապրանքների հետ:Սակայն եթե ոչխարի տիրոջը անհրաժեշտ է ցորեն, իսկ ցորենի տիրոջը՝ ոչ թե ոչխար, այլ մեկ այլ ապրանք, ապա փոխանակության գործընթացը այս դեպքում ավելի է բարդանում՝ կապված ապրանքների քանակի մեծացման հետ: Հետևաբար փոխանակության համար

ժամանակի և տեղի սահմանափակումները կրկին պահպանվում են, այսինքն՝ փոխանակության մասնակիցները պետք է գտնվեն միևնույն վայրում և միևնույն ժամանակ:

3. Արժեքի համընդհանուր ձևը

Աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացումը և փոխանակության զարգացումը հանգեցրին արժեքի երրորդ՝ **համընդհանուր** ձևին: Այս դեպքում ամբողջ ապրանքային աշխարհից առանձնացան տարբեր ապրանքներ, որոնք ծառայում էին որպես համարժեքներ մնացած ապրանքների համար: Արժեքի համընդհանուր ձևը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով՝

1 պարկ ցորեն
2 զույգ կոշիկ
2 մ կտոր = 1 ոչխար
2 թուր
3 մ կաշի և այլն

Այս փոխանակության ժամանակ ոչխարը գտնվում է համարժեքային ձևում և կատարում է պասիվ դեր, իսկ մնացած ապրանքները գտնվում են հարաբերական ձևում և կատարում են ակտիվ դեր: Այս դեպքում ապրանքները ստանում են իրենց արժեքի արտահայտման միասնական ձև: Իսկ համընդհանուր համարժեք-ապրանքը արդեն շատ քիչ է օգտագործվում իր սկզբնական նշանակվածությանը համապատասխան(տվյալ դեպքում ոչխարը ավելի շատ օգտագործվում է որպես փոխանակման միջոց, քան որպես միս կամ բուրդ):

Համընդհանուր համարժեքի գլխավոր առավելություններն այն էին, որ

1. հնարավոր եղավ տարբեր ապրանքների արժեքները քանակապես համեմատել միմյանց հետ
2. այս նոր պայմաններում հնարավոր էր որևէ ապրանք վաճառել մի տեղ և մեկ այլ վայրում գնել այլ ապրանք, այսինքն՝ առքուվաճառքի վայրն ու ժամանակը անպայման չէ, որ համընկնեին: Այս սահմանափակումների վերացումը չափազանց հեշտացնում է փոխանակությունը:

4. Փողային կամ դրամական ձև

Երբ ապրանքափոխանակությունը դուրս եկավ մի երկրի շրջանակներից, անհրաժեշտություն առաջացավ ընտրել մի այնպիսի ապրանք, որը կկատարեր համարժեքի դեր և կընդունվեր բոլոր երկրների ապրանք արտադրողների կողմից: Այսպիսի ապրանք դարձավ փողը: Այսպիսով, փողն իրենից ներկայացնում է համընդհանուր համարժեքի ավարտուն ձևը կամ էտալոնը՝ մի ապրանք, որի ստառողական արժեքի հետ սերտաճել է արժեքի համարժեքային ձևը: Քանի որ փողը ստանում է համընդհանուր ճանաչում և հանդես գալիս որպես արժեքների չափակցման միավոր, ունի իրացվելիության բարձր աստիճան:

Սկզբնական շրջանում փողի դերը ամրակցվեց ոսկուն և արծաթին: Դա պայմանավորված էր այդ ապրանքների մի շարք հատկություններով, որոնք անհրաժեշտ են փողի դեր կատարելու համար՝

1. <u>Միասեռությունը</u>, այսինքն՝ ոսկու կամ արծաթի նույն կշիռ ունեցող կտորները իրարից ոչնչով չեն տարբերվում, հետևաբար միևնույն քաշն ունեցող մետաղադրամները ունեն միևնույն գնողունակությունը:
2. <u>բաժանելիություն</u>, այսինքն՝ հեշտությամբ կարելի է բաժանել առանձին մասերի և առանձին մասերը միացնել իրար: Ընդ որում՝ այս ընթացքում նրանք չեն կորցնում իրենց արժեքը, ինչպես նաև սպառողական հատկությունները:
3. <u>դյուրակրությունը</u>, այսինքն՝ ոսկու և արծաթի փոքր կտորներ պարունակում են մեծ արժեք, հետևաբար նրանցով կարելի է գնել շատ ապրանքներ: Իսկ փոխանակության, առևտրի ժամանակ դա շատ կարևոր է:
4. <u>հազվագյուտությունը</u>, այսինքն՝ բնության մեջ այն քիչ է, ստեղծվում է ավելի մեծ դժվարությամբ, ուստի մյուս ապրանքների նկատմամբ արժեքը ավելի մեծ է:
5. <u>պահպանվածությունը</u>, այսինքն՝ ազնիվ մետաղները հեշտ է պահպանել, քանի որ նրանք ունեն այնպիսի ֆիզիկաքիմիական հատկություններ, ինչպես օրինակ՝ կոռոզիայի չենթարկվելը(այսինքն՝ ոչ մի քիմիական էլեմենտի հետ նրանք ռեակցիայի մեջ չեն մտնում):

Այնուամենայնիվ, մետաղական փողերը ունեին նաև իրենց թերությունները՝

1. ոսկյա փողերի պատրաստման և օգտագործման ծախսերը չափազանց մեծ էին,
2. հնարավոր չէր բավարարել ոսկե դրամների նկատմամբ պահանջը, որը աճում էր ավելի արագ, քան դրանց արդյունահանումը:
3. Նույնիսկ շատ փոքր չափերով ոսկե դրամները (որոնք շատ հեշտ էր նաև կորցնելը), ունեին բավականին մեծ արժեք:

Այս և մի շարք այլ պատճառներով աստիճանաբար դադարեցվեց մետաղական փողերի օգտագործումը: Դրան հակառակ մեծ տարածում գտան թղթից պատրաստված արժենիշերը, այդ թվում ՝ թղթադրամները և վարկային փողերը(բանկնոտներ):

Այսպիսով, անցում կատարվեց մետաղադրամային շրջանառության համակարգից թղթե փողերի և վարկային փողերի շրջանառության համակարգին:

Թղթադրամային փողերը պատմականորեն առաջացել են որպես ոսկե և արծաթե մետաղադրամների փոխարինողներ: Դրանց օգտագործման հնարավորությունը պայմանավորված է փողի՝ շրջանառության միջոցի ֆունկցիայի հետ, երբ փողը հանդես է գալիս միայն որպես միջնորդ:

Մետաղադրամների հետ համեմատած՝ թղթադրամները դրանց տիրոջը տալիս են որոշակի առավելություններ(օրինակ՝ հեշտ է պահելը, հարմար է մանրածախ առևտուր կատարելու համար և այլն):

Թղթադրամների թողարկման իրավունքը պատկանում է պետությանը, որը դրանք թողարկում է սեփական ծախսերը ապահովելու համար, իսկ փողերի հակառակ հոսքը՝ պետական բյուջե վերադարձվելը, կատարվում է հարկերի վճարման և այլ ոչ հարկային վճարումների ձևով:

Թղթադրամային շրջանառության ծագմանը զուգընթաց յուրաքանչյուր պետություն սահմանում է իր երկրի փողային միավորը (դրամ, դոլար, եվրո, ռուբլի և այլն): Տարբեր երկրների փողային միավորները պարունակում են ոսկու որոշակի քանակություն: Թղթադրամի օգտագործումը հնարավորություն տվեց փողի կանխիկ շրջանառությանը զուգընթաց կատարել փողի անկանխիկ շրջանառություն:

Պետությունը միասնական թղթադրամներ թողարկելու առանձնահատուկ իրավունքը վերապահում է Կենտրոնական բանկին:

<u>Վարկային փողեր</u>: Այս փողերը առաջացել են ապրանքային արտադրության զարգացման հետ, երբ առքուվաճառքը իրականացվում էր վճարման հետաձգմամբ: Դրանց առաջացումը կապված է փողի վճարելամիջոցի ֆունկցիայի հետ, երբ փողը հանդես է գալիս որպես պարտավորություն, որը պետք է հետ վերադարձվի նախօրոք պայմանավորված ժամկետում: Այս փողերի տնտեսական նշանակությունը փողային շրջանառության էլաստիկության ապահովումն է, որը հնարավորություն է տալիս տնտեսել իրական փողերը, նպաստել կանխիկ շրջանառության զարգացմանը:

Վարկային փողերը նույնպես պատրաստվում են թղթից, սակայն դրանց թողարկումը սովորաբար կատարում են բանկերը վարկային գործարքների կատարման ժամանակ, այսինքն՝ այս փողերի թողարկումը կատարվում է

տնտեսական գործարքների իրականացման ժամանակ, այլ ոչ թե կախված պետական եկամուտներից և ծախսերից:

Վարկային փողերը անցել են զարգացման հետևյալ ուղին՝ *մուրհակ, բանկնոտ, չեկ, էլեկտրոնային փողեր, վարկային քարտեր*:

<u>Մուրհակը</u> գրավոր պարտավորություն է, որտեղ նշված է, թե ով, երբ, ում և որքան գումար պետք է վճարի:

<u>Բանկնոտները</u> պարտքային պարտավորություններ են, որը նրա սեփականատիրոջը իրավունք էր տալիս բանկից պահանջելու այնտեղ նշված գումարը:

<u>Չեկը</u> ավանդատիրոջ կողմից գրված հրամանն է բանկին՝ իր հաշվից չեկում նշված անձնավորությանը փող տալու մասին:

<u>Պլաստիկ վարկային</u> <u>քարտերի</u> կիրառումը սկիզբ դրեց *անկանխիկ հաշիվների համակարգին*, որտեղ գործարքները կատարվում են առանց կանխիկ փողերի մասնակցության: Սա ներկայումս փողի ամենահարմար և ամենատարածված ձևերից է: Այս դրամական միջոցի շարժը ամբողջությամբ տեղի է ունենում համակարգչային տեխնիկայի օգնությամբ կատարվող գործառնություններով: Փողի փոխանցումը մի հաշվից մյուսը կատարվում է վարկային քարտերի օգնությամբ, որոնք դրանց կրողների գնումների դիմաց վճարման բանկային պարտավորություններ են:

2. Փողի ֆունկցիաները

Փողի էությունը ավելի վառ ձևով դրսևորվում է նրա կատարած ֆունկցիա- ների միջոցով:

Փողը կատարում է հետևյալ ֆունկցիաները՝

1. արժեքի չափման ֆունկցիա
2. շրջանառության միջոցի ֆունկցիա
3. վճարման միջոցի ֆունկցիա
4. կուտակման և խնայողության ֆունկցիա

2.1. Արժեքի չափման ֆունկցիա

Փողի արժեքի չափման ֆունկցիայի էությունը կայանում է նրանում, որ դրա միջոցով հնարավոր է դառնում չափել մյուս ապրանքների արժեքները: Փողի այս գործառույթը կարևորագույն դեր է խաղում ամբողջ հասարակական տնտեսության կազմակերպման և գուծունեության մեջ, քանի որ միասնական չափի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում չափակցելու և քանակապես համեմատելու տարբեր ապրանքների և ծառայությունների հարաբերական արժեքները, ճիշտ այնպես, ինչպես հեռավորությունը չափում ենք կիլոմետրերով կամ զանգվածը՝ կիլոգրամներով:

Փողը արժեքի չափման ֆունկցիան կատարում է իդեալականորեն, այսինքն՝ մտովի պատկերացմամբ: Այս կամ ապրանքի արժեքը չափելու համար փողի առկայությունը պարտադիր չէ: Ապրանք արտադրողները, իրենց ապրանքի արժեքի համար որոշակի գին սահմանելով, այն արտահայտում են փողով: *Ապրանքի արժեքը, փողով արտահայտված, կոչվում է գին*: Ապրանքի գինը ձևավորվում է շուկայում, և եթե դրա առաջարկն ու պահանջարկը հավասար են, ապա այն կախված է ապրանքի արժեքից և փողի արժեքից: Լիարժեք փողերի (ոսկին և արծաթը) դեպքում ապրանքի գինը ուղիղ համեմատական է այդ ապրանքի արժեքին և հակադարձ համեմատական՝ փողի գնին: Շուկայում ապրանքի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության դեպքում ապրանքի գինը անխուսափելիորեն շեղվում է իր արժեքից: Արժեքի այսպիսի շեղումները ապրանք արտադրողին հնարավորություն են տալիս կողմնորոշվել, թե որ ապրանքն է արտադրվել ոչ բավարար քանակությամբ, և որ ապրանքը՝ ավելցուկով:

Ոսկու ստանդարտի դեպքում ապրանքի գինը կախված էր դրա արժեքից, քանի որ ոսկյա փողերի արժեքը համեմատաբար կայուն է: Թղթադրամների դեպքում

ապրանքի գինը արտահայտվում է արժենիշերի միջոցով, որոնք չունեն սեփական արժեք, դրա համար էլ առաջանում են միևնույն ապրանքի գների տարբերություններ, որը դժվարացնում է ապրանք արտադրողների կողմից ճիշտ որոշում ընդունելը:

Փողերի միջոցով գների սահմանման ժամանակ որոշիչ դերը պատկանում է ապրանքի արժեքին: Բայց անհրաժեշտ է հաշվի առնել նաև մի շարք այլ հանգամանքներ, մասնավորապես՝ ապրանքի սպառողական արժեքը, միմյանց փոխարինող ապրանքների արժեքն ու գինը, վճարունակ պահանջարկի առկայությունը, պետության կողմից տարվող միջոցառումները(օրինակ՝ ակցիզային հարկերի, մաքսային տուրքերի սահմանումը) և այլն:

Տարբեր արժեք ունեցող ապրանքների համեմատության համար անհրաժեշտ է դրանք բերել մեկ ընդհանուր մասշտաբի: *Ոսկու այն կշռային չափը, որը տվյալ պետության կողմից ընդունվում է որպես փողի միավոր, կոչվում է գների մասշտաբ:* Փողի արժեքի չափի ֆունկցայի և գների մասշտաբի միջև էական տարբերություններ գոյություն ունեն: Փողը արժեքի չափման ֆունկցիան կատարում է այն պատճառով, որ փողն ինքն է օժտված արժեքով, իսկ գների մասշտաբը ոսկու որոշակի չափն է՝ ֆիքսված վիճակում: Այլ կերպ ասած ՝ փողը, որպես արժեքի չափ, կատարում է հասարակական ֆունկցիա, իսկ որպես գների մասշտաբ՝ տեխնիկական ֆունկցիա:

2.2. Շրջանառության միջոցի ֆունկցիա

Փողի՝ շրջանառության միջոցի ֆունկցիան ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ ապրանքափոխանակությունը անմիջական ձևից անցնում է միջնորդավորված ձևին: Ընդ որում, եթե արժեքի չափման ֆունկցիայի դեպքում փողի առկայությունը պարտադիր չէր, ապա այս ֆունկցիան առանց փողի հնարավոր չէ իրականացնել: Այս ֆունկցիան կատարվում է իրական փողերի միջոցով, որոնք պարտադիր չէ, որ լինեն լիարժեք փողեր: Դրանք կարելի է փոխարինել արժենիշերով, քանի որ փոխանակության ժամանակ փողը հանդես է գալիս միայն որպես միջնորդ:

Պարզ ապրանքափոխանակության ժամանակ, որը կարելի է ներկայացնել **Ա-Ա** սխեմայով, արտադրողները չեն բաժանվում գնորդների և վաճառողների: Այլ կերպ ասած ՝ այս պրոցեսում երկուսն էլ միաժամանակ և՛ գնորդ են, և՛ վաճառող: Փողի հանդես գալուց հետո **Ա-Ա** փոխանակության սխեման ընդունեց **Ա-Փ-Ա** տեսքը: Այս դեպքում փողն ապրանքների փոխանակության համար կատարում է միջնորդի դեր: Եթե **Ա-Ա** -ի դեպքում առքն ու վաճառքը սահմանափակված էին մեկ գործարքով, ապա **Ա-Փ-Ա**- ի ժամանակ դրանք բաժանվում են ինքնուրույն 2 գործարքների՝ **Ա-Փ**՝

վաճառ- քի գործարք և **Փ-Ա**՝ առքի գործարք: Այս դեպքում առքն ու վաճառքը իրարից անջատվում են և՛ տարածության, և՛ ժամանակի մեջ: Այսինքն՝ ապրանք արտադրողը հնարավորություն ունի վաճառել իր ապրանքը այսօր, իսկ ստացած փողով ապրանք գնել 1 օրից, 1 շաբաթից, ամսից և այլն: Բացի այդ նա կարող է վաճառել իր ապրանքը մի շուկայում և գնել իրեն անհրաժեշտ ապրանքը մեկ այլ շուկայում:

Սակայն փողի առաջացման հետ փոխանակության ժամանակ առաջացող հակասությունները չեն վերանում, այլ հակառակը, ավելի են ուժեղանում: Ունենալով փող՝ որպես ինքնուրույն արժեք, ապրանք արտադրողը կարող է օգտագործել այն որտեղ և երբ ցանկանա,այսինքն՝ **Ա-Փ** գործարքին կարող է չհետևել **Փ-Ա** գործարքը, եթե վաճառողը ընդհանրապես չցանկանա գնում կատարել: Այս դեպքում մի երրորդ ապրանք արտադրող չի կարողանա վաճառել իր ապրանքը:

Եթե առք ու վաճառքի գործարքների այսպիսի խախտումները հասնում են մեծ չափերի, ապա առաջանում է ապրանքների գերկուտակում՝ իրացում չգտնող ապրանքների մեծ պաշարներ: Գալիս ենք այն եզրակացության, որ փողի շրջանառության միջոցի ֆունկցիան հանգեցնում է գերարտադրության տնտեսական ճգնաժամերի, քանի որ տեղի է ունենում առքուվաճառքի բևեռների անջատման իրական պայման՝ ըստ ժամանակի և տարածության:

Փողի մասնակցությունը, որպես շրջանառության միջոցի, հնարավորություն է տալիս ազդեցություն ունենալ վաճառողիների և գնորդների միջև տնտեսական հարաբերությունների վրա: Այսպես, գնորդները նախօրոք պետք է համոզված լինեն, որ վաճառվող ապրանքների ստառողական արժեքը համապատասխանում է առաջադրվող պահանջներին: Առանց այս հանգամանքը հաշվի առնելու՝ իրացումը տեղի չի ունենա: Գնորդը վերահսկում է նաև առաջարկվող ապրանքի գինը: Այս դեպքում հաշվի են առնվում գների մակարդակը, ապրանքի առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունը, միմյանց փոխարինող ապրանքների գները և այլն:

Իր հերթին վաճառողը պետք է համոզված լինի գնորդի մոտ վճարման միջոցի առկայության մեջ:

2.3. Վճարման միջոցի ֆունկցիա

Ապրանքի վաճառքի և փողի վճարման ակտերի բաժանման շնորհիվ փողը սկսեց կատարել մեկ այլ ֆունկցիա՝ **վճարման միջոցի ֆունկցիան**: Փողի այս գործառույթը առաջացել է ՝ կապված կապիտալիստական տնտեսություններում զարգացող վարկային հարաբերությունների հետ: Գնորդը իր ցանկացած ապրանքը

գնելու համար կարող է չունենալ համապատասխան կանխիկ միջոցներ: Դրա պատճառ կարող է հանդիսանալ ժամանակի և տարածության մեջ ապրանքների արտադրության և իրացման պրոցեսների անհամապատասխանությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ արդյունքն արտադրվելուց հետո անմիջապես չի իրացվում, այսինքն՝ չի վերածվում փողի, բայց նրա սեփականատերը արտադրական և անձնական կարիքների բավարարման համար պետք է կատարի գնումներ: Սա պետք է իրականացնել փողի միջոցով, որը տվյալ արտադրողը կարող է ունենալ միայն որոշակի ժամանակ անց:

Այս դպքում առաջանում է վարկի միջոցով առքուվաճառքի անհրաժեշտություն, այսինքն՝ վաճառք՝ հետագա վճարման պայմանով: Այս դեպքում որպես շրջանառության միջոց՝ ծառայում են ոչ թե իրենք՝ փողերը, այլ դրանց մեջ արտահայտված պայմանագրային պարտավորությունները: Այսպիսի գործարքների հետևանքով մի ապրանք արտադրողը դառնում է վարկառու, իսկ մյուսը՝ վարկատու:

Փողի վճարելամիջոցի ֆունկցիայի հիման վրա ձևավորվել են վարկային հարաբերությունները, որոնց նախնական փուլը մուրհակային շրջանառությունն է: Այս ֆունկցիայի հետ են կապված նաև բանկնոտների և չեկերի առաջացումը:

2.4. Կուտակման և խնայողության ֆունկցիա

Երբ շրջանառության **Ա-Փ-Ա** պրոցեսում տեղի է ունենում **Ա-Փ** գործարքը, բայց տեղի չի ունենում **Փ-Ա** գործարքը, ապա փողը դուրս է գալիս շրջանառությունից և կուտակվում է **Ա-Փ** փուլը իրականացնողի մոտ:

Երբ փողը ժամանակավորապես շրջանառությունից հանվում է, պայմանով, որ հետագայում այն նորից պետք է մտնի շրջանառության մեջ, ապա այս դեպքում փողը կատարում է **կուտակման ֆունկցիա:** Փողի կուտակման ֆունկցիան իր արտահայտությունն է գտնում բնակչության կողմից խնայողություններ կատարելու ժամանակ: Բնակչությունն իր եկամուտների մի մասը ոչ թե օգտագործում է ընթացիկ սպառման կարիքների համար, այլ կուտակում է որևէ այլ նպատակի համար: Կուտակման միջոց կարող են հանդիսանալ նաև այլ իրեր, օրինակ՝ թանկարժեք իրերը, անշարժ գույքը, արվեստի գործերը, արժեթղթերը, բաժնետոմսերը և այլն: Տնտեսագիտական գրականության մեջ դրանք ընդունված է անվանել լիկվիդային, այսինքն՝հնարավոր է օգտագործել որպես վճարելամիջոց: Ի տարբերություն մյուս ակտիվների՝ փողն ունի ամենամեծ իրացվելիությունը: Մյուս ակտիվներն ունեն ավելի փոքր լիկվիդայնություն: Այսպես, որպեսզի անշարժ գույքը հանդես գա որպես վճարման միջոց, անհրաժեշտ է նախ գնորդ գտնել և կատարել

վաճառքի հետ կապված որոշակի ծախսեր: Բացի այդ անշարժ գույքի գները որոշակի ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել՝ կապված տեղի, տարվա եղանակի հետ և այլն: Իրացվելիության աստիճանով փողին մոտ են գտնվում պետական արժեթղթերը: Նրանք հեշտությամբ կարող են վաճառվել ֆինանսական շուկայում, որտեղ դրանց արժեքը տատանվում է աննշան չափով: Չնայած դրան՝ փողը, որպես ամենամեծ լիկվիդայնություն ունեցող միջոց, մի կողմից եկամուտ չի բերում, իսկ մյուս կողմից (հատկապես ինֆլյացիայի պայմաններում) գտնվում է արժեզրկման վտանգի տակ: Այդ պատճառով անհրաժեշտ է կուտակված փողերի ճիշտ և նպատակահարմար տեղաբաշխում կատարել: Այս խնդրի լուծման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ պահանջները՝

1. ներդրած փողերը ցանկացած պահին անարգել օգտագործելու հնարավորությունը
2. ներդրման հուսալիությունը
3. ռիսկի մինիմալացումը
4. ներդրված միջոցներից եկամուտ ստանալու հնարավորությունը:

Եթե փողը շրջանառությունից հանվում է և պահվում իր բնական տեսքով, այսինքն՝ ոսկու ձուլակտորների, պերճանքի առարկաների ձևով և այլևս շրջանառության մեջ չի մտնելու, ապա այս դեպքում փողը գանձ և սկսում է կատարել **<u>գանձագոյացման ֆունկցիա:</u>** Մետաղադրամային շրջանառության պայմաններում գանձագոյացման ֆունկցիան կարևոր տնտեսական դեր էր կատարում. դրա միջոցով կարգավորվում էր դրամաշրջանառությունը: Սկզբնական շրջանում փողի արժեզրկում չի եղել, քանի որ երբ շրջանառության մեջ մեծ է փողի քանակը, տարերայնորեն ոսկյա դրամները դուրս են եկել շրջանառությունից և վերածվել դրամի,իսկ երբ փողի նկատմամբ պահանջարկը շրջանառության մեջ փոքր է եղել, ոսկին գանձից վերածվել է փողի և կրկին մտել շրջանառության մեջ: Ժամանակակից պայմաններում փողի գանձագոյացման ֆունկցիան ունի մի շարք առանձնահատկություններ: Այն դադարել է շրջանառության մեջ փողի անհրաժեշտ քանակի կարգավորիչի դեր կատարելուց: Դա պայմանավորված է նրանով, որ ոսկով չփոխանակվող արժենիշերը չեն կարող ավտոմատ ձևով գանձից անցնել շրջանառության ոլորտ և հակառակը, ինչպես ոսկու ստանդարտի պայմաններում: Չնայած դրան՝ ոսկին շարունակում է կատարել գանձի ֆունկցիան: Ոսկին դիտարկվում է որպես հուսալի խնայողություն, բացի այդ ոսկու պաշարները ապահովում են ազգային արժույթի նկատմամբ վստահությունը:

Եզրակացություն

Այսպիսով, մենք պարզեցինք, թե ինչ է իրենից ներկայացնում փողը, ուսումնասիրեցինք նրա ծագումը, էությունը, զարգացման ճանապարհը, կատարած ֆունկցիաները: Տեղեկացանք, որ ժամանակի ընթացքում փողի փոխարեն օգտագործվել են տարբեր ապրանքներ՝ կաշի, մորթեղեն, անասուններ, արծաթ, ոսկի և այլն: Աստիճանաբար հիմնական դերը իր վրա է վերցրել ոսկին, որն օժտված էր հետևյալ հատկանիշներով՝

1. քանակական բաժանելիությունը
2. որակական միատարությունը
3. ոսկու փոքր քանակի մեջ առարկայացած է աշխատանքի մեծ քանակություն և հարմար է տեղափոխման համար
4. կոռոզիայի չենթարկվելը

Հետազոտական աշխատանքում ուսումնասիրեցինք փողի կատարած ֆունկցիաները, որ փողը հանդես է գալիս որպես արժեքի չափման միավոր, շրջանառության միջոց, վճարման միջոց և կատարում է խնայողության և կուտակման գործառույթ:

Հատուկ ուշադրություն ենք դարձրել թղթադրամային փողին, որպես ոսկյա փողի փոխարինող: Նշեցինք թղթադրամի առավելությունները, որ այն հեշտ է պահելը, հարմար է կուտակելը և առևտուր կատարելը: Պարզեցինք, որ թղթադրամների թողարկման իրավունքը պատկանում է պետությանը:

Այսպիսով՝ փողը հանդիսանում է ժամանակակից տնտեսության անբաժանելի մասնիկը, այն գտնվում է բոլոր տնտեսական հարաբերությունների հիմքում, առանց որի չեն կարող գոյատևել ոչ անձը և ոչ էլ պետությունը:

Փաստորեն պարզվեց, որ փողը հանդիսանում է մարդու մեծագույն հայտնագործություններից մեկը և մեծ դեր ունի մարդկային հասարակության զարգացման գործում:

Օգտագործված գրականություն

1. ‘Տնտեսագիտություն բոլորի համար’, Ա. Մարկոսյան, Տիգրան Մեծ, Երևան 2001թ.
2. ‘Տնտեսագիտության տեսություն’, Ռ. Ա. Թովմասյան, Երևան Տնտեսագետ 2004թ.
3. Հասարակագիտություն, 10-րդ դասարան, Ս. Պետրոսյան, Երևան 2021թ.